ԱՎԱՍՏԻՆԸ ՈՐՊԵՍ ԶԱՐԳԱՑՈՂ ՏԱՐԻՔԱՅԻՆ ՄԱԿՈՒԼՅԱՐ ԴԵԳԵՆԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱԼԻՐ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍ

Թևոսյան Մ.Ս., Մալայան Ա.Ս.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Առողջապահության նախարարության հանրապետական հիվանդանոցի Արմինե Պակումեանի անվան կլինիկա, Ստեփանակերտ, ԼՂՀ
Ս. Ս Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն, Երևան, Հայաստան

Հակա-անոթային էնդոթելիալ աճի գործոնը կարող է համարվել տարիքային մակուլյար դեգեներացիայի (ՏՄԴ) բուժման արդյունավետ միջոց և կիրառվել լազերային կոագուլյացիայի ու ֆոտոդինամիկ բուժման հետ զուգորդված: Տեսողության սրության փոփոխության դինամիկայի դիտարկումը ավաստինի ինտրավիտրեալ ներարկումից հետո բացահայտել է տեսողության աստիճանական լավացում ՏՄԴ-ի նեովասկուլյար ձևերով հիվանդների մոտ: Ընդ որում, լավացման բարձրակետը գրանցվել է ներարկումից հետո առաջին ամսվա վերջում: ՏՄԴ-ի նեովասկուլյար ձևերով հիվանդների մոտ անոթային էնդոթելիալ աճի գործոնի արգելակիչ ավաստինը ներկայանում է բավականին արդյունավետ դեղամիջոց նման լուրջ հիվանդության բուժման համար:

OFFICIAL PUBLICATION OF THE YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY